ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 18.02.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/35

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 02.02.2022թ. թիվ 26/26-1/1807-2022 գրությամբ Ադրինե Մարգարյան Արմենի Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 25.01.2022թ. թիվ ՊՆ/02/333-2022 գրության հիման վրա, 02.02.2022թ. թիվ 26/26-1/1807-2022 գրությամբ նախաձեռնել է Ադրինե Մարգարյան Արմենի Ա/Ձ-ին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Ադրինե Մարգարյան Արմենի Ա/Ձ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Ադրինե Մարգարյան Արմենի Ա/Ձ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ադրինե Մարգարյան Արմենի Ա/Ձ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/35 ընթացակարգի շրջանակներում 10.02.2022թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 25.01.2022թ. թիվ ՊՆ/02/333-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և Ադրինե Մարգարյան Արմենի Ա/Ձ-ի միջև 09.04.2021թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-21-7/9-3 գնման պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2022թ. հունվարի 21-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է վերոնշյալ պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 24.01.2022թ. հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու համար կից ներկայացվում են վերոնշյալ մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/35 ընթացակարգի շրջանակներում 10.02.2022թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/35 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/35 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության և Ադրինե Մարգարյան Արմենի Ա/Ձ-ի միջև 09.04.2021թ. կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-21-7/9-3» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրի Հավելված N 1-ի Գնման ժամանակացույցով ապրանքների մատակարարման համար սահմանվել է հետևյալը.

Հ/Հ	Անվանումը	Չափման միավորը	Քանակը			Մատակարարումը 2021թ. ըստ եռամսյակների, ընդ որում՝
				Միավորի գին (ՀՀ դրամ)	Ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)	3-րդ եռամսյակ
16	Տարբերանշաններ /Կրծքանշան գրասենյակային /ՌՈ/	հատ	600	190	114000	600
17	Տարբերանշաններ /Կրծքանշան արյան կարգի/ գրասենյակային /ՌՈ/	հատ	600	190	114000	600
18	Թևքանշան և այլ պարագաներ /Թևքանշան գրասենյակային /ՌՈ/	հատ	600	300	180000	600
19	Թևքանշան և այլ պարագաներ /Թևքանշան ՌՈ/	հատ	600	300	180000	600

3. ՀՀ պաշտպանության նախարարությունը, Ադրինե Մարգարյան Արմենի Ա/Ձ-ին ուղղված 24.01.2022թ. թիվ ՊՆԱ/2-92 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և Ադրինե Մարգարյան Արմենի Ա/Ձ-ի միջև 09.04.2021թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-21-7/9-3 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Ձեր ընկերությունը 2021թ. 3-րդ եռամսյակում պետք է մատակարարեր տարբերանշաններ /Կրծքանշան /գրասենյակային/ ՌՈ/ 600 հատ, տարբերանշաններ /Կրծքանշան արյան կարգի/ գրասենյակային /ՌՈ/ 600 հատ, թևքանշան և այլ պարագաներ /Թևքանշան գրասենյակային /ՌՈ/ 600 հատ, թևքանշան և այլ պարագաներ /Թևքանշան ՌՈ/ 600 հատ, որը չի մատակարարել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2022թ. հունվարի 21-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է վերոնշյալ Պայմանագիրը...»

4. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 24.01.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 02.02.2022թ. թիվ 26/26-1/1807-2022 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 25.01.2022թ. թիվ ՊՆ/02/333-2022 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության և Ադրինե Մարգարյան Արմենի Ա/Ձ-ի միջև 09.04.2021թ. կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-21-7/9-3» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի Հավելված N 1-ի Գնման ժամանակացույցով ապրանքների մատակարարման համար սահմանվել է հետևյալը.

Հ/Հ	Անվանումը	Չափման միավորը	Քանակը			Մատակարարումը 2021թ. ըստ եռամսյակների, ընդ որում՝
				Միավորի գին (ՀՀ դրամ)	Ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)	3-րդ եռամսյակ
16	Տարբերանշաններ /Կրծքանշան գրասենյակային /ՌՈ/	հատ	600	190	114000	600
17	Տարբերանշաններ /Կրծքանշան արյան կարգի/ գրասենյակային /ՌՈ/	հատ	600	190	114000	600
18	Թևքանշան և այլ պարագաներ /Թևքանշան գրասենյակային /ՌՈ/	հատ	600	300	180000	600

19	Թևքանշան և այլ պարագաներ /Թևքանշան ՌՈ/	հատ	600	300	180000	600

ՀՀ պաշտպանության նախարարությունը, Ադրինե Մարգարյան Արմենի Ա/Ձ-ին ուղղված 24.01.2022թ. թիվ ՊՆԱ/2-92 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և Ադրինե Մարգարյան Արմենի Ա/Ձ-ի միջև 09.04.2021թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-21-7/9-3 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Ձեր ընկերությունը 2021թ. 3-րդ եռամսյակում պետք է մատակարարեր տարբերանշաններ /Կրծքանշան /գրասենյակային/ ՌՈ/ 600 հատ, տարբերանշաններ /Կրծքանշան արյան կարգի/ գրասենյակային /ՌՈ/ 600 հատ, թևքանշան և այլ պարագաներ /Թևքանշան գրասենյակային /ՌՈ/ 600 հատ, թևքանշան և այլ պարագաներ /Թևքանշան ՌՈ/ 600 հատ, որը չի մատակարարել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2022թ. հունվարի 21-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է վերոնշյալ Պայմանագիրը...»

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 24.01.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են ***30 օրից ավելի***:

Այսպիսով՝ վերը շարադրված փաստական հանգամանքների ուժով՝ արձանագրում եմ, որ Ադրինե Մարգարյան Արմենի Ա/Ձ-ն խախտել է իր և ՀՀ պաշտպանության

նախարարության միջև 09.04.2021թ. կնքված Պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ինչի արդյունքում Մասնակիցը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի ամբողջությամբ լուծման:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Մասնակիցը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են Ադրինե Մարգարյան Արմենի Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 02.02.2022թ. թիվ 26/26-1/1807-2022 գրությամբ Ադրինե Մարգարյան Արմենի Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ադրինե Մարգարյան Արմենի Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**